

# Ֆ. ԳՐԻՆԻ *ARMENIAN MASSACRES AND TURKISH TYRANNY* ՈՒՂԵԳՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ ՈՒ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ\*

Նաիրա Գասպարյան  
Երևանի պետական համալսարան

Հոդվածը նվիրված է Հայաստանյան առաքելության ամերիկյան ներկայացուցիչ պատվելի Ֆրեդերիկ Դեյվիս Գրինի<sup>1</sup> “*Armenian Massacres and Turkish Tyranny*” (*Հայերի կոտորածները և թուրքական բռնապետությունը*) ուղեգրության<sup>2</sup> լեզվաոճական և ճանաչողական առանձնահատկությունների քննությանը: Ուղեգրությունները՝ իբրև պատմագիտական ստեղծագործության ժանր, միտված են ներկայացնելու պատմական իրողություններն առավել համապարփակ ու փաստարկված: Հոդվածում փորձ է արվում վերլուծական քննությամբ բացահայտելու ճանաչողական միավորների ու լեզվաոճական հնարների կիրառման առանձնահատկությունները: Շնորհիվ շարադրանքի ինքնատիպության՝ XIX դարի վերջում ստեղծված ուղեգրությունը լեզվաբանական ուսումնասիրության համար այսօր էլ կարող է հետաքրքիր և հարուստ լեզվական նյութ տրամադրել: Հետազոտությունը կատարված է արտալեզվական գործոնի հաշվառմամբ և ճանաչողական, լեզվաոճական, զուգադրական վերլուծության մեթոդների կիրառմամբ:

**Բանալի բառեր.** ուղեգրություն, լեզվաոճական առանձնահատկություններ, ճանաչողական միավորներ, արտալեզվական գործոն, բացասական բեռնվածություն, 1894-1896 թթ. համիդյան ջարդեր:

## Ներածություն

Անկախ ուղեգրությունների լույս աշխարհ գալու շարժառիթներից, բնույթից, ընդգրկման ժամանակահատվածից, բովանդակությունից, լեզվաոճական ինքնատիպությունից և տվյալ հիշողությունները թղթին հանձնած հեղինակի զգացական մոտեցումներից՝ անցյալի հիշողությունները պատմության շարադրման անվիճելի աղբյուր են, հատկապես, երբ հիշողություններ ներկայացնող նյութը մատուցվում է անկողմնակալ ու չեզոք դիրքերից:

Ֆ. Գրինի “*Armenian Massacres and Turkish Tyranny*” գիրքը հուշագրություն-ուղեգրության յուրահատուկ նմուշ է: Այն խորությամբ անդրադառնում է համիդյան հայահալած ու հայասպան քաղաքականությանը, թուրք-քրիստոնյա, թուրք-հայ հարաբերություններին, Հայաստանյան առաքելության գործունեությանը, հայ և թուրք ինքնությունների նկատմամբ եվրոպացիների մոտեցմանը, հայ-թուրքական հարաբերությունների գլադիատորական արժևորմանը<sup>3</sup>, հայկական հարցի վերաբերյալ Գլադիատորի մարդասիրական վերաբերմունքին ու հայանպաստ գործունեությանը: Խնամքով խմբագրված մեծածավալ (512 էջ) այս աշխատությունը առաջին իսկ հայացքից ուշադրություն է գրավում այն առումով, որ թե՛ Ֆ. Գրինը, թե՛ Վ.Ի.

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 26.12.2016:

Գլադիատորնը և թե՛ գրքի տարբեր մասերի հեղինակներն ու խմբագիրները, անդրադառնալով 1894-1896 թթ. համիդյան ջարդերին, իբրև դրանց իրագործման տարածք նշում են Հայաստան տեղանունը: Հրատարակիչները գրքի առաջին էջերից մեկում հատուկ նշում են կատարել այն մասին, որ գրքի 1896թ. հրատարակությունը նվիրում են «Հայաստանում Մուհամեդի սրով մարտիրոսված քրիստոնյաների հիշատակին»: Այսպիսով, *Հայաստան* տեղանունը հենակետային բառի կարգավիճակով է դրսևորվում՝ համիդյան ջարդերի հիշատակման համատեքստում:

Քրդական էլեկտրոնային արխիվի համապատասխան էլեկտրոնային էջում<sup>4</sup> նշված հատորյակը բնութագրվում է իբրև «թուրքական վայրագությունների լիակատար և հոգեցունց հաշվետվություն»: Գիրքը ավելի հուզիչ տպավորություն է գործում շնորհիվ կից ներկայացված մոտավորապես հարյուր նկարների: Գրքում զետեղված խաչքարի պատկերը Ֆ. Գրինը բնութագրում է իբրև «հայկական բարձրարվեստ մշակույթը ներկայացնող» նմուշ, իսկ իբրև թուրքական «մշակույթի» անխոս վկա ներկայացվում է մի պատկեր, որտեղ թուրքերը երեխայի կտրված գլուխը «հրամցնում են» երեխայի հորը:

### **Ճանաչողական միավորների և լեզվաոճական առանձնահատկությունների քննություն**

Նյութի ընթերցումը բացահայտում է, որ գրքում բավականին մեծ թիվ են կազմում բացասական բեռնվածություն ունեցող բառերն ու բառակապակցությունները, որոնք կարող են դիտարկվել իբրև ճանաչողական կառույցներ: Այդպիսի միավորներն օգնում են ավելի լավ պատկերացնելու 1894-1896թթ. Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակն ու համիդյան քաղաքականությունը կրոնական փոքրամասնությունների նկատմամբ ընդհանրապես և հայերի նկատմամբ մասնավորապես: Այդպիսի միավորներ են, օրինակ, *the recent outrages (in Armenia) – վերջերս Հայաստանում տեղի ունեցած անօրինությունները, indelible disgrace (on the Sultan) – անպատվաբեր ու ամոթալի (Սուլթանի համար), to trample out (the faith in Christ) with fire and massacre – հրով ու սրով հողին հավասարեցնել հավատն առ Քրիստոս, flog them till their bodies were a bloody, mangled mass – խոշտանգել այնքան մինչև նրանց մարմինները վերածվեն արյունաշաղախ տձև մսակտորների, the dead were horribly mangled – մահացածների մարմինները մաս-մաս էին արվում, mangled corpses – խոշտանգված ու պատառոտված դիակներ*: Նմանօրինակ զգայացունց բառակապակցությունները բավականին մեծ թիվ են կազմում ուղեգրության մեջ: Գրինը թուրքերի խոշտանգումներին ու անմարդկային չարագործություններին, ավելի ճիշտ բարբարոս ու գիշատիչ վարքի անթիվ ու անհամար դեպքերի նկարագրությունների է անդրադառնում գրքի բազմաթիվ բաժիններում, որոնց ռեմատիկ բեռնվածություն կրող վերնագրերը մեր կողմից դիտարկվում են իբրև ճանաչողական միավորներ: Այդպիսի օրինակներից են *Robbed of Liberty and Life – խլված ազատություն և կյանք, Fiends in Human Shape – Մարդակերպ հրեշներ, Cruelty and Torture – Ղաժանություն և տանջահարություն*, և այլն: Վերջին *Cruelty and Torture* վերնագրի ներքո մանրամասն նկարագրվում են հայերի անմարդկային խոշտանգումները թուրք խուժանի կողմից: Նույնիսկ Հայոց Մեծ Եղեռնին նախորդող այս ջարդերը թուրքական ատյանները փորձել են դիտարկել իբրև պատերազմական իրավիճակի անբաժանելի մաս: Գրքի *The Last the Worst* բաժնում, հեղինակությամբ իրավագիտության դոկտոր Քինսլի Թվայնինգի, դիտարկումը բացահայտում է, որ *մոլեռանդ մահմեդա-*

կան տաճիկը, որին նա կոչում է *the Saracen*, իր սրբապիղծ ոտքերով կոխկրտում է Քրիստոսի հավատը՝ որի ու սրի մատնելով Սիրիայի ու Եգիպտոսի քրիստոնյաներին, ավերելով՝ հզորությունը կորցրած աֆրիկյան եկեղեցիներն ու Իսպանիայի հարուստ հարթավայրերը, իր արյունառնուշտ ու զազանաբարո արարքներն աշխատում է արդարացնել՝ կապելով դրանք պատերազմի փաստի հետ (*confined his cruelty to the field of war*) ու համոզել, որ խաղաղ ժամանակներում ինքը միշտ արդար ու մեղմ վարք է ցուցաբերում (*his reign in peace was mild and just*).

*During the hundred years when Islam was trampling out the faith in Christ with fire and massacre in Syria and Egypt, shook its sword over the enfeebled churches of Africa, the rich fields of Spain, and finally went down at Poitiers under the tremendous blows of Charles Martel and his Austrasian Franks, during all this bloody course the Saracen could say for himself that he had confined his cruelty to the field of war, and that his reign in peace was mild and just. (p. 346)*

*The Saracen* – տաճիկը փոխանունության կիրառմամբ սուլթան Աբդուլ Համիդի արյունառնուշտ կերպարը հառնում է իր ողջ զազրելիությամբ: Նա որքան նվիրված էր մուսուլման թուրքին, նույնքան բարբարոսաբար էր տրամադրված հայ քրիստոնյայի նկատմամբ: Բայց միևնույն ժամանակ էլ փորձում էր խուսափել իր գործած չարիքների պատասխանատվությունից՝ պատերազմի պատրվակի տակ թաքցնելով իրականությունը:

Փորձ է կատարվել հատուկ վերլուծության ենթարկել նաև այնպիսի ճանաչողական միավորներ, որոնք գրքում ունեն հենակետային բնույթ և միտված են հեղինակի դիտարկումները ընթերցողին հասցնելու հնարավոր լիարժեքությամբ: Այս նպատակով վերլուծության համար ընտրել ենք բացասական երանգավորում ունեցող *atrocities, disgrace, barbarities* գոյականական հիմքով միավորները, որոնք գրքում մեծ թիվ են կազմում:

1. **Massacres;** *the Armenian massacres; calculate the law of massacre in Turkey; the Turkish massacres.*

2. **Atrocities;** *horrid atrocities; terrible atrocities; the ineffable atrocities; other atrocities, too horrible to relate; Sassun atrocities; The Atrocities Proved (p. 245) (վերնագրում); Atrocities in Many Places (p. 276) (վերնագրում); Cause and Extent of Recent Atrocities (p. 431) (վերնագրում).*

3. **Disgrace;** *disgrace to Mohamed; disgrace to civilization; damning disgrace to the portion of our race; a solution which will disgrace Christianity and laugh civilization; disgrace in the face of civilization.*

4. **Barbarities, horror, terror;** *unutterable barbarities and hellish horrors; bloodcurdling barbarities; with shuddering horror; Reign of Terror. (p. 346) (վերնագրում).*

Գրքում առկա այսօրինակ կապակցությունների մեր քննությունը սահմանափակել ենք միայն որոշակի խմբի վերլուծությամբ՝ ելնելով այն հանգամանքից,

որ մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր չէ քննության ամեն ինչը ուղեգրության հսկայաքանակ նյութը:

Վերլուծությունից պարզում ենք, որ *massacre, atrocities, barbarities, horror, terror slaughter* գոյականների իմաստային դաշտերը հաճախ համընկնում են՝ մատնանշելով անմարդկային ու զազանաբարո վարք: Սակայն ամենակարևորը Ֆ. Գրինի ստեղծած տեքստում այն է, որ հեղինակն իր՝ ականատեսի հույզերն ավելի դիպուկ և ըստ էության արտահայտելու համար դիմում է կրկնակի բացասական բեռնվածություն ունեցող միավորների օգնությամբ՝ նշված բացասական երանգավորում ունեցող գոյականները բառակապակցական շարույթի մեջ համադրելով բացասական բեռնվածություն ունեցող այլ միավորների հետ. օրինակ՝ *horrid atrocities; terrible atrocities; the ineffable atrocities; unutterable barbarities and hellish horrors; bloodcurdling barbarities; shuddering horror; terrific slaughter* և այլն՝ ընդգծելով թուրքի աներևակայելի զազանաբարո վարքը:

Բացահայտում ենք նաև, որ եզակի չեն այն դեպքերը, երբ հեղինակը չեզոք կամ դրական բեռնվածություն ունեցող բառերի օգնությամբ ստեղծում է այնպիսի կապակցություններ, որոնք ծեռք են բերում բացասական երանգավորում՝ ներակա իմաստների հիմքում ոչնչացնող ժաղրն է, ինչպես օրինակ գրքում մեծ հաճախությամբ հանդիպող *disgrace* (գոյական, բայ) (*անպատվություն, եղկելի համբավ բերել, ամոթ ու անպատվություն բերել և այլն*) բառով կազմված կապակցությունները: *Disgrace to Mohamed; disgrace to civilization; damning disgrace to the portion of our race; a solution will disgrace Christianity and laugh civilization; disgrace in the face of civilization* կապակցությունների կիրառությունը շեշտում է թուրքի արյունարբու ու վայրագ բնույթը, որը ամոթ ու անպատվություն է ոչ միայն համայն մարդկության համար, այլև Մուհամեդի, որին «գոհացնելու համար» թուրքը ոչնչի առջև կանգ չի առնում: Իր միտքն ավելի հստակ արտահայտելու համար հեղինակը դիմում է փոխաբերության օգնությամբ՝ ականամայից այդ վիճակում հայտնված քրիստոնյա հային համեմատելով գառների հետ, իսկ թուրք խուժանին՝ գայլերի:

*They would be lambs in the midst of wolves. Every one knows this who knows anything of Turkey outside of Constantinople. (p.179)*

Աշխարհի լուռ անտարբերությունը հավասարազոր է թողտվության, որից տաճիկը ավելի է ոգևորվում: Գրինը համոզված է, որ աշխարհը քաջատեղյակ է Հայաստանում տիրող իրավիճակին, այդ արյունալի փաստերը այնքան շատ են ու համատարած, որ այլևս անտանելի են (*Such fiendish and brutal facts are so frequent that we are sick.*): Նա համոզված է, որ անզեն խաղաղ բնակչության նկատմամբ նման արյունարբու վարքի ու մարդկային տառապանքներ պատճառելու ժամանակը վաղուց է անցել, ու քաղաքակիրթ աշխարհը չի կարող համալերապել դրա հետ:

*It may be the time has passed when such deeds of blood and torture, committed upon unarmed men, women and children, can be condoned by the civilized world. (p.179)*

Նյութի վերլուծությունից պարզում ենք նաև, որ բացասական բեռնվածությամբ միավորները առատորեն օգտագործված են նաև վերնագրերում: Հայտնի

է, որ ոչ գեղարվեստական ստեղծագործության մեջ վերնագրերը սովորաբար ռեմատիկ բնույթ ունեն, իսկ ռեմատիկ՝ նորույթ ներմուծող վերնագրի ներքո ակնկալվում է գտնել թարմ դեպքերի նկարագրություններ: Բերենք մի քանի այդպիսի վերնագրեր.

*They Are Martyrs;*  
*The Knot is Cut by the Sword;*  
*The Animus of the Atrocities;*  
*The Atrocities Proved;*  
*Cause and Extent of Recent Atrocities;*  
*The Koran Sanctions Massacre;*  
*Atrocities in Many Places;*  
*An Infamous Prayer.*

Ուղեգրության մեջ հատուկ ուշադրության է արժանի *civilization, humanity, humour, compassion, harmony* չեզոք և դրական բեռնվածությամբ բառային միավորների գործածության յուրահատուկ բնույթը: Գրինի հուշագրություն-ուղեգրության մեջ նշված միավորների կիրառությունը բոլորովին այլ երանգ է ստանում՝ կախված այն համատեքստից, որտեղ նրանք հանդիպում են: *Civilization, civilized* միավորները Գրինի ուղեգրության մեջ ճանաչողական նշանակություն ունեն, որովհետև բարբարոս տաճիկի վարքը քաղաքակրթության ամոթն է, և քաղաքակիրթ երկրները լռելու իրավունքը չունեն, քանզի թուրքի գործած ոճիրը հակադրվում է մարդկայինն ու դեմ է քաղաքակրթության օրենքներին: Գրինի որակավորմամբ՝ հայերի նկատմամբ իրագործված ջարդերը ու լայն իմաստով՝ վարված քաղաքականությունը ոչ միայն բացառիկ են, այլև ամենայն ճշգրտությամբ համապատասխանում են ու ներդաշնակ են թուրքական տեսությանն ու թուրքի գործած վայրագությունների նախորդ հարուստ փորձին: Գրինը ամփոփում է իր միտքը ոճական շեշտադրում կրող պարզ նախադասությամբ՝ *այդ ամենը սպասելի էր*, որովհետև նախորդ հարուստ փորձը պարարտ հող էր ստեղծել սուլթանի հետագա գործունեության համար:

*The Armenian massacres that have shocked the world, so far from being exceptional, are, therefore, exactly in harmony with Turkish theory and justified by abundant precedent. They were to have been expected. (p. 432)*

Փաստորեն Գրինը ակամայից ընդունում է, որ թուրքի մշակույթը ոճրագործությունն ու սպանելն է (Ղադրյան 1995:79, Գասպարյան 2017:79): Գրքի ընդամենը մեկ վերնագիրը և դրա ներքո ամփոփված նյութը այնքան խոստում են, որ առաջին իսկ հայացքից ակնհայտ են դարձնում մոլեռանդ իսլամականների հեռահար մտադրությունները, որից սարսափած է Հայաստանում առաքելություն իրականացնող բարեպաշտ քրիստոնյա հեղինակը՝ պատվելի Ֆրեդերիկ Գրինը:

Վերլուծության ենթարկելով երեք իրար հաջորդող վերնագրեր (*The Koran Sanctions Massacre; Death to "Infidels"; An Infamous Prayer*)՝ գալիս ենք այն

համոզման, որ հայերի մասսայական արյունալի կոտորածները իրագործվել են սուլթան Աբդուլ Համիդ II-ի ձեռքով ու Ղուրանի պահանջով:

*In the politico-religious organization which is called the Ottoman Empire, massacre is considered a legitimate, necessary and very useful method of administering the country. (p. 434)*

Օսմանյան Կայսրությունը կոչելով **քաղաքական-կրոնական կազմակերպություն** Գրինը մերկացնում է նրա էությունը. այս երկրում մասսայական ջարդերը կառավարման **օրինական, անհրաժեշտ և չափազանց օգտակար** միջոց են: Չեզոք բեռնվածություն ունեցող բառերի մի ամբողջ շարք՝ վերագրվելով Օսմանյան կայսրությանը՝ պատմագիրը բացահայտում է մի հրեշավոր ճշմարտություն, որն այնպես խնամքով փորձում է սքողել ներկայիս պաշտոնական թուրքիան, սակայն որը չի կարող բաժանվել իրական թուրք ինքնությունից, քանզի վերջինիս մշակույթը «մորթելն» է: Հատկանիշ մատնանշող **legitimate, necessary, very useful** միավորները **politico-religious organization – քաղաքական-կրոնական կազմակերպություն** բառակապակցության հետ միասին ձեռք են բերում հզոր բեռնվածություն՝ համադրվելով **massacre** գոյականի հետ: Գրինի դիտարկումը պարունակում է ցավի ու ծաղրի համակցություն՝ երբ տեսնում ես սեփական աչքերով, գիտես, որն է «բուժամիջոցը», սակայն անկարող ես դուրս գալ հսկայական «քայքայվող» կառույցի դեմ. միակ ելքը սոցիալ-քաղաքական ծաղրին դիմելն է, ինչպես և վարվում է ամերիկյան առաքելության ներկայացուցիչ պատվելի Գրինը:

Հաջորդ տեքստահատվածը, որը ներկայացված փաստերի հրեշավորության աստիճանով հավասարը ունենալ չի կարող, ավիովված է **An Infamous Prayer – Տխրահամբավ աղոթք** վերնագրի ներքո և թուրքի աղոթքն է առ աստված, որտեղ բարեպաշտ հավատացյալը դիմում է Ալլահի ողորմածությանը, այո, ակնկալում է, որ Ալլահն այնքան ողորմած ու կարեկից լինի, որ բնաջնջի Ալլահի և իսլամի անհավատ և բազմաստված թշնամիներին՝ որբացնի նրանց երեխաներին, պղծի ու ոչնչացնի նրանց տներն ու սրբավայրերը, որ անհավատներին ու բազմաստվածներին, նրանց ընտանիքներին, կանանց, զավակներին, հարազատներին կործանման տանի, նրանց ունեցվածքը հարստությունները, հողերն ու ցեղն ամբողջովին «հալալ անի» մուսուլմաններին: Եվ Ալլահի «ողորմածությունն» ու «հովանավորությունը» ստանալով՝ թուրքը «կփրկվի սատանայից ու անիծվածներից»:

*"I seek refuge with Allah from Satan, the accursed. In the name of Allah the Compassionate, the Merciful! O Lord of all Creatures! O Allah! Destroy the infidels and polytheists, thine enemies, the enemies of the religion! O Allah!*

*Make their children orphans, and defile their abodes! Cause their feet to slip; them and their families, their households and their women, their children and their relations by marriage, their brothers and their friends, their possessions and their race, their wealth and their lands, as booty to the Moslems, O Lord of all Creatures!" (p. 434)*

Համատեքստում ընդգծված միավորները, ըստ էության, թանձրացնում են աղոթքն առ աստված՝ խոսքին նպատակային անողոքություն հաղորդելով, որի ուժգնացմանը նպաստում է հրամայական եղանակի կիրառությունը: Աղոթքի խոսքի նման պահանջատիրական ձևը խորթ է քրիստոնյա հային, որին հեղինակն ընկալում է որպես ազնվական:

Նշված ճանաչողական տարրերից բացի, էական է նաև աղոթքի ձևը. մուսուլմանը Ալլահին շնորհակալ չէ իրեն տրվածի համար, նա ոչինչ չի խնդրում Ալլահից: Հրամայական եղանակի ձևերի առկայությունը վկայում է, որ նա *պահանջ* է ներկայացնում Ամենակարող Տիրոջը և ակնկալում, որ Ալլահը կբավարարի իր ցանկությունները. արյունով ձեռք բերածը «հալալ կանի» (*booty to the Moslems*) հավատացյալ մուսուլմանին: Գրինը սարսափահար նկատում է, որ նշված աղոթքը իսլամին անվերապահորեն նվիրված սուլթանի երկրում պաշտոնական տարածում և գործածություն ունի և միայն Կահիրեի "Azhar" համալսարանում երկրի տարբեր մասերից հավաքված տաս հազար մահմեդական ուսանող ամեն օր հնչեցնում է այդ աղոթքը (p. 434):

Առաջին հայացքից անմեղ թվացող *prayer – աղոթք և student – ուսանող* գոյականները, հայտնվելով լարված բացասական բեռնվածություն ունեցող համատեքստում, երևան են հանում սարսափելի ճշմարտությունը, որը համապատասխանում է Գրեգորի Սթենթոնի սահմանած ցեղասպանության առաջին չորս փուլերին (<[www.genocidewatch.org](http://www.genocidewatch.org)>, Գասպարյան 2017:95-96):

### Եզրակացություն

Ֆ. Գրինի՝ 1894-1896 թթ. ստեղծված ուղեգրությունը առանձնանում է գրքում կիրառված լեզվառձական հնարների և ճանաչողական կառույցների ինքնատիպությամբ, որը թերևս, պայմանավորված է արտալեզվական գործոնների անմիջական ազդեցությամբ՝ իրավիճակի յուրօրինակությամբ և Արևմտյան Հայաստանում ապրող քրիստոնյա հայի ազգային կերպարի առանձնահատկություններով:

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ֆ. Գրինը, նախ, պաշտոնավարել է իբրև Ազգային հոգևոր կոմիտեի քարտուղար, ապա աշխատել է Թուրքիայի Հայաստանյան առաքելության կազմում: Ֆ. Գրինի մասին տեղեկատվությունն անգլերենով շատ աննշան է, իսկ հայկական հանրագիտարանում և դրա վրա հիմնված ցեղասպանության թանգարանի կայքում բերված տեղեկատվությունը՝ թերի:
2. Greene, D. "Armenian Massacres and Turkish Tyranny", Philadelphia & Chicago, International Publishing Co., 1896.
3. Գլադսթոնը (1809-1898) այն անգլիացի քաղաքական գործիչներից էր, որոնք ուժերը ներածին չափ փորձել են սատարել արևմտահայությանը, նրանց ձայնը լսելի դարձնել բրիտանական կառավարությանը, ուղիներ փնտրել նրանց թուրքական սպառնալիքից ազատագրելու համար: Նա իր կյանքի ընթացքում չորս անգամ պաշտոնավարել է որպես Բրիտանիայի վարչապետ և պաշտոնի բերումով արդեն քաջածանոթ էր և հետաքրքրվում էր արևմտահայության ճակատագրով: Հայկական ջարդերից հետո Գլադսթոնն այնպիսի հոււզմունք ապրեց, որ մինչև անգամ հայտարար

րեց՝ Թուրքիան պետք է վերանար քարտեզի վրայից, որովհետև դրան էր արժանի (deserved to be wiped off the map) (Գասպարյան 2017:100): Լիբանանյան հետազոտող Սելիմ Դերինջիլը Գլադսթոնին վերագրում է առասպելական ունակություններ՝ նրան կոչելով Լիբերալ գաղափարախոսության հսկա (Deringil 2009:345):

4. Քրդական էլեկտրոնային արխիվի համապատասխան էլեկտրոնային էջում Ֆ. Գրինի գրքի բնորոշումը տես՝ <<http://www.saradistribution.com/turkish-tyrannysword.htm>> (դիտվել է 16.06.2017):

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Dadrian, V.N. (1995) *The History of the Armenian Genocide*. Oxford: Berghahn Books, p. 123.
2. Deringil, S. (2009) *The Armenian Question is Finally Closed. II Comparative Studies in Society and History*, 51 (2). Cambridge: CUP.
3. Greene, F.D. (1896) *Armenian Massacres and Turkish Tyranny*. Philadelphia & Chicago: International Publishing Co.
4. Stanton, G. *The Ten Stages of Genocide*. Available at: <[www.genocidewatch.org](http://www.genocidewatch.org)> [Accessed March 2017].
5. Գասպարյան, Ն. (2017) Հայ ինքնությունը օտարների աչքերով. / մենագրություն. Երևան: Լուսակն:

### **The Linguostylistic and Cognitive Value of Rev. F. Greene's “Armenian Massacres and Turkish Tyranny”**

The article deals with the analyses of the linguostylistic and cognitive properties of the book which presents F. Greene's observations and considerations concerning the period of 1894-1896 in Armenia, while Greene was on a Relief Mission in the Armenian branch of the organization. He depicts the true picture of Hamidian atrocities and the poor and unbearable social-political life of the Armenians on the land of their ancestors. The direct and open influence of the Turkish atrocities, in harmony with the extralinguistic reality – the existing social, political and religious factors on the life of Armenia can be observed in the language and style of the book.

### **Лингвостилистическая и когнитивная значимость книги Ф. Грина “Armenian Massacres and Turkish Tyranny”**

Целью данной статьи является выявление наиболее эффективных когнитивных единиц и лингвостилистических особенностей, которые ярко выражают интенцию автора – американского миссионера Ф. Грина – показать кровавую политику Абдул Гамида и его бесчеловеческое отношение к армянскому народу. Лингвостилистические особенности книги изучены с учетом экстралингвистических факторов. Сделана попытка установить когнитивную значимость книги Ф. Грина “Armenian Massacres and Turkish Tyranny,” опубликованной в 1896 г.